

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ՔԵՍԱՊԻ 1909Ի ԿՈՏՈՐԱԾԻՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասեան
mihran.min@gmail.com

1909ի Կիլիկեան Կոտորածները հարուածեցին ո՛չ միայն Ատանայի Նահանգի հայերը, այլ նաեւ Հալէպ Նահանգի հայկական Քեսապ քաանն ու անոր շրջակայ գիւղերու բոտ մը հայութիւնը:

Անտիոքի հայոց Կոտորածէն ետք, 20-30 հազարանոց թուրք խուժանը հաաքուելով Քեսապի մօտակայ Օրտու թրքաքնակ գիւղը, յառաջացած է դէպի Քեսապի Սեւ Աղբիւր, Էսկիւրէն-Խայիթ եւ Չինարճըզ գիւղերը, Կողոպտած ու այրած է զանոնք, ապա բարձրացած է Քեսապ եւ շրջակայ միա քաանները, թալանած, այրած ու սպաննած է հանդիպող իրաքանչիւր հայ: Կարճատեւ դիմադրութենէ ետք, քեսապցիներու մեծամասնութիւնը կրցած է խոյս տալ ու ապաստանիլ մօտակայ լեռները, ուրկէ անցած է Պասիթի ծովափ, հոսակ՝ տեղափոխուած Լաթաքիա:

Յետագայ էջերով իրատարակութեան կու տանք Հալէպի Ազգային Առաջնորդարանի դիւանատան մէջ պահուող եւ Քեսապի ու շրջակայ հաաքնակ քաաններու 1909ի Կոտորածին առնչուող եօթը անտիպ փաստաթուղթեր, որոնց առաջին չորսը աղէտէն ետք տեղւոյն բնակչութեան վիճակը քննելու համար Հալէպի Ազգային Առաջնորդարանի կողմէ գործուողած Ռուբէն Էճաճեանի՝ եւ Յովհաննէս Ճիւրճեանի՝ տեղեկագրերն են: Անոնցմէ վեցերորդը՝ Քեսապի հայութեան ունեցած մարդկային կորուստներու մասնակի ցուցակն է, յագեցած՝ կարեւոր մանրամասնութիւններով ու տեղեկութիւններով: Դժբախտաբար ցուցակը ամբողջական չէ եւ անոր մեծադիւր երեք թերթերէն երկրորդը կորած է, բայց հակառակ ասոր, պահպանուած թերի բաժինն իսկ խօսուն է ու եզակի:

Քեսապի պատմութեան նուիրուած իր հատորին մէջ քեսապցի Ալպէտ Թէմիրեան տուած է 1909ի Կոտորածներուն զոհուած 11 քեսապցիներու անուններ, որոնք ջարդի միջոցին գտնուած էին Քեսապէն դուրս՝ Այաս կամ Անտիոք ու սպանուած՝ տեղւոյն հայութեան հետ: Այդ նահատակներն են՝ Գէջիկունց Պետրոս եւ Խաչիկ, Չէլթելիւնց Ճօրճի, Գէփըտիւնց Ճօրճի, Միւլիւնց Նշան, Քիւլաղաիւնց Սարգիս, Եագուպիւնց Մանաս, Ջուրնաճիւնց Աբրահամ, Պուլատիւնց Սէկէ եւ Մինասեանց երկու եղբայրները՝: Այս 11 զոհերու անուններուն սակայն չենք հանդիպիր իրատարակուող առաջին աղիւսակին մէջ, հակառակ անոր որ այնտեղ տրուած են Այասի ու Անտիոքի մէջ նահատակուած քանի մը այլ քեսապցիներու անուններ եա:

Ըստ երեսյոթին, այդ անունները արձանագրուած են կա՛մ հրատարակուող ցուցակի կորսուած երկրորդ թերթին մէջ եւ կա՛մ երեք՝ տեղ չեն գտած այնտեղ: Բացառուած չէ նաեւ, որ անոնք յիշուած ըլլան հրատարակուող ցանկին մէջ, բայց հոս տրուած տուեալները բաւարար չեն ճշդելու անոնց ինքնութիւնը, որովհետեւ անոնցմէ շատեր յաճախ յիշուած են իրենց տրուած ծածկանուններով, բան մը որ շատ ընդհանրացած էր եւ որոն գործածութեան այնքան վարժ էին քեսապցիք:

Դ., Ե. եւ Զ. փաստաթուղթերը գրուած են տեղի կրօնական գործիչներուն կողմէ, որոնցմէ մէկը թէւ յղուած է Անտիոքէն, բայց իր բովանդակութեամբ մեծ մասամբ կ'առնչուի Քեսապին ու կը պարունակէ անոր մասին խիստ արժէքատու վիճակագրութիւն. այս պատճառով ալ զայն կը հրատարակենք Քեսապին վերաբերող փաստաթուղթերու այս ժողովածուին մէջ:

Այս փաստաթուղթերը կը խօսին կոտորածներէն ետք շրջանին մէջ տիրող ծայրայեղ թշուառութեան, սովի սպառնալիքին, կառավարական նպաստներու դադրեցումին, ոճրագործներու ազատ արձակման ու անոնցմէ շատերուն ազատ-համարձակ շրջագայութեան, ժողովուրդին մէջ տիրող յուսալքութեան եւ յարակից այլ թեմաներու մասին: Կայ նաեւ շատ կարեւոր վիճակագրութիւն մը շրջանի բնակչութեան թաւաքանակին եւ նիւթական վնասներուն, ինչպէս նաեւ այրուած ու ւեքակուած անհատական եւ ազգային-եկեղեցական կալուածներուն մասին:

Առաջին անգամ գիտական շրջանառութեան դրուող այս փաստաթուղթերը նոր լոյս կը սփռեն դէպքերուն վրայ եւ կ'ամրոցացնեն ո՛չ միայն Քեսապի պատմութիւնը, այլեւ՝ Կիլիկեան Կոտորածներու մասին մեր պատկերացումները:

Հոս չենք խօսիր Քեսապի մասին, պարզապէս կրկնութենէ խուսափելու համար, որովհետեւ անոր պատմութիւնը արդէն ծանօթ է հայ բանասիրութեան շնորհիւ հոյլ մը երախտատրներու՝ Յակոբ Չոլաքեանի⁴, Թէմրեանի⁵, Ալլպէրթ Ս. Աբէլեան (Էթիւնց)-երուանդ Հ. Քասունիի⁶ եւ այլոց աշխատասիրութիւններուն:

Նոյնպէս մեր ծանօթագրութիւններուն մէջ նուազագոյն չափով կ'անդարդառնանք շրջանի հայաբնակ աւաններուն եւ կու տանք անոնց աշխարհագրական դիրքը ճշտող՝ տեղեկութիւններ ու հակիրճ ծանօթութիւններ միայն, որոնց մանրամասն նկարագրութիւնն ու պատմութիւնը տրուած են Չոլաքեանի վերոնշեալ հատորին մէջ:

Փաստաթուղթերը հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան: Կատարած ենք միայն կէտադրական աննշան հպումներ եւ բացած ենք յապատումները: Մեր կողմէ կատարուած յաւելումները առած ենք անկիւնատու փակագիծերու մէջ []:

Ծանօթագրութիւնները չխճողելու համար, բնագրին մէջ հանդիպող հայատառ թրքերէն բառերուն թարգմանութիւնները տուած ենք անոնցմէ

անմիջապես ետք, նույն փակագիծերուն մէջ եւ ոչ թէ ծանօթագրութիւններու ձեւով:

Ա.

Ռուբէն Էճգաճեանի եւ Յովհաննէս Ճիւրճեանի նամակը Քեսապի մէջ տիրող թշուառութեան եւ կառավարութեան կողմէ նպաստի բաշխումին ու անոր դադրեցումին մասին

Քեսապ 1/14 Մայիս 909

Գեր. Ա. հայր?,

Կը հաստատենք ներկայի 29/11 թուակիր գրութիւննիս:

Տեղւոյս ժողովրդեան Լաթաքիէ մեկնումի օրն (այսինքն) ամսոյս 14/29ին տեղւոյս միփասարըֆը⁸ 5 ատուր համար պարեն կանխաւ կը փութացնէ հոս, որով ութ օրէ ի վեր վերադարձած լինելով յիշեալ պարենը սպառած գոլով այսօր երրորդ օրն է ժողովուրդը անօթի է, Ճիսիրի գայմագամութեան⁹ կողմէ տակաւին պարեն չ'տրուեցաւ, հակառակ գայմագամի¹⁰ հաւաստիքներուն մինչեւ ց'արդ ոեւէ օգնութիւն մը չ'եղաւ ուտեստի վերաբերմամբ հակառակ որ նա իր բոլոր ուժով աշխատիլ ցոյց կ'տայ, ուստի ներկայս ստանալնուդ անմիջապէս եւ առանց վայրկեան իսկ կորսնցնելու պատշաճն տնօրինել հաճեցէք, եթէ ոչ մեծամեծ դժբաղդութիւններ Դեմոկլեսի սուրին պէս կախուած պիտի ըլլան խեղճ ժողովրդեան գլխուն եւ անխուսափելի մահ մը իր անբերները պիտի գործէ անօթութեան հետեանօք, ուստի փութացուցէք Ձեր նպաստներն ալ, մի՛, մի սպասէք որ կառավարութիւնը կատարէ զայն, անոնք որքան որ լիարուն ըլլան, մի յուսաք թէ բազմադիմի պահանջներուն բաւեն, գէթ առաջին օրերու մէջ. ժողովուրդը անօթի է, մերկ է, տուն չ'ունի, վերմակ խշտեակ եւ այլ անհրաժեշտ միջոցներէ զուրկ է: Օգնութեան յապաղելը անքաւելի յանձանք մ'է:

Համբուրիք Ա. աջոյդ.

Ռուբէն Էճգաճեան Յ. Ճիւրճեան

Բ.

Ռուբէն Էճգաճեանի եւ Յովհաննէս Ճիւրճեանի կազմած Քեսապի եւ շրջակայքի արկածեալ գիւղերու ցուցակը

Քեսապ եւ շրջակայ հայաբնակ արկածեալ վայրեր

1- Քեսապ

2- Գարատուրան

3- Էքիզ Օլուզ¹¹

- 4- Քէօրքենէ
- 5- Չագգալըզ¹²
- 6- Չընարըզ
- 7- Խայիթ¹³
- 8- Էսքիւրէն
- 9- Գայաըզ
- 10- Տիւզ Աղաճ¹⁴
- 11- Պաշուրթ¹⁵

Այս գիւղերը Քէսապէն 10-30 վայրկեան հեռաւորութեան մէջ կը գտնուին եւ անոր թաղերը կը համարուին:

Ռ. Է. Յ. Ճ.¹⁶

Գ.

Ռուբէն Էճգաճեանի եւ Յովհաննէս Ճիւրճեանի կազմած Քեսապի մահերու, ծնունդներու եւ ամուսնութիւններու վիճակագրութիւնը

Լաթաքիայէ վերադարձէ վերջ¹⁷ մահ, ծնունդ եւ ամուսնութիւն

	արու	եգ
Մեռած չափահաս	2	7
Մեռած մանուկ	4	8
Ծնունդ մանուկ	7	8
Գումար մահ 21		
Գումար ծնունդ	15	
Գումար ամուսնութիւն	2	

Ռ. Է. Յ. Ճ.¹⁸

Դ.

Վահան Քինյ. Կիլտալեանի նամակը Անտիոքի ու Քեսապի հայութեան թշուառ վիճակին եւ իր կազմած Քեսապի ու շրջակայ գիւղերու վիճակագրութիւնն ու մարդահամարը

Անտիոք 4/17 Յունիս 909

Գերապատիւ

Տ. Շահէ Վրդ. Գասպարեան

Բարեջան Կաթ. փոխանորդ հայոց

Հալէպ

Գեր. Ս. հայր,

Երէկ երեկոյեան ժամ[ը] 1-ին վերադարձանք Քէսապէն Գէորգ աղային¹⁹ հետ, Իտարէի Էօրֆիյէն²⁰ հրատարակուած էր առտուն, Արժ. Տ.

Ներսէս հայրը վալի փաշային²¹ հետ տեսնուած ըլլալով, այս առտու 5 հաստատութեանց մէջ գտնուող հայերը այցելելու մտադրութիւնը հասկցած էր, ուստի այսօր մեր առաջին գործը եղաւ իրեն քով երթալ եւ յետ այնու պտտիլ միասին, պտտեցաւ տեսաւ ցաւալի վիճակը ընտանիքներուն եւ իբրեւ թէ ֆրանսերէն երբեք չենք հասկնար, կը խոստովանի վիճակին ծանրութիւնը իւր քով գտնուող տեղակալին, հայ կանանց քաջութիւնը ուրախալի թուեցաւ մեզ-անոնք ուր որ գացինք իրատունքը պնդեցին, իրենց կողոպտուած ապրանքը եւ նոյն իսկ իրենց մեռածները... ուզեցին, յայտնեցին միանգամայն թէ չ'պիտի երթան իրենց տուն, վալի փաշան քաղցրութեամբ թափսիյէ²² մ'ըրաւ լոկ եւ յայտնեց թէ լաւ պիտի ըլլայ եթէ տուն վերադառնաք, հոս հիւանդութիւն թերեւս անելի մօտ կը գտնուի ձեզ եայլն, հարցուց նաեւ իրենց ապրանքները, տեղակալը յայտնեց թէ տուած ենք, մինչ մենք պնդեցինք որ տրուածները ասոնք են, նա անելի եւս անցուց՝ տուներուն մէջն է: Պատասխանեցինք թէ, եթէ կ'ուզէք երթանք եւ քննենք: Լռեցին:

Քեսապէն վերադարձիս Սուէյտիոյ²³ գիտերէն անցեր էի, յիշեցինք վալիին թէ հոն գտնուող թշուառներուն օրական պարէն չ'տրուիր, երկայն բարակ հարցուց, ի վերջոյ հրամայեց որ անոնց ալ տրուի, բայց նախ մասնատր տետրակի մը պատրաստութիւնը հարկ եղաւ:

* * *

Յաւ 'ի սիրտ յայտնել կը պարտաւորիմ թէ 93 հայ ընտանիքներ Լաթաքիայէն վերադառնալէն վերջ լատին եկեղեցին ընդունելու տրամադիր գտնուած եւ նոյն իսկ [մինչեւ] իմ հոն երթալը շարունակած եւ կը շարունակէին. պատճառներն են. I իբր թէ Մովսէս վրդ.²⁴ գիրենք Լաթաքիայէն վոնտած ըլլայ. II իրենց գիտին քահանային²⁵ ապիկար եւ անկարողութիւնը, նոյնիսկ ուղիղ կամ սխալը դատելու համար. III ժողովրդին անհամերաշխ ընթացքը: Երեք օր շարունակ աշխատեցայ քարոզել եւ յորդորել հրապարակաւ եւ առանձինն, վերջապէս Բ2. գիշեր մինչեւ ժամ 3 1/2 աշխատեցայ եւ ուրախ եմ որ խոստացան ոտք չ'կոխել այլեւս, միայն թէ բանիմաց եւ կարող քահանայ մը ուզեցին, յիրաւի իրատունք ունին, բողոքականները ազատ եւ ընդարձակ միջոցներ եւ մարդիկ ունին հոն, լատինները նոյնպէս, իսկ մենք ոչինչ, կամ անելի ճիշդ արձանի կտոր մը:

[Վահան Քինյ. Կիլտալեան]²⁶

Ե.

Քեսապի երեք եկեղեցականներու նամակը պետական նպաստի թերի բաժանումին, ոճրագործներու անպատժելիութեան, տիրող թշուառութեան ու տրամադրութիւնք նպաստներուն մասին

Գերաշնորհ
Տէր Շահէ Վրդ. Գասպարեան
Կաթողիկոսական փոխանորդ Բերիոյ,

Հայր Սուրբ,

Ասկէ առաջ երկու անգամ գրեցինք ձեզ, բայց չենք գիտեր ինչ պատճառով ունէ լուր չստացանք: Գործերնիս կաղն ի կաղ կը շարունակենք, քանի կառավարութիւնը իր խոստացած նպաստը կանոնատրապէս չի տար: Յարդ 62 օր կ'ընէ նպաստի սկսելուն եւ օրական անձի գլովս 20 փարա²⁷ որջ դրամէն այս տեղի ժողովուրդը 223,166 դահեկան առնելիքին տեղ միայն 68,786 դահեկան {միայն} առած է ու 154,290 պահանջ ունի: Նոյնպէս ցորենի նպաստէն 178,534 օգգայի²⁸ տեղ միայն 79,995 օգգան տրուած է ու կը մնայ 98,539 օգգան:

Այժմ ժողովուրդը խիստ նեղութեան մէջ է ու կէս մը անօթի: Մենք մեր կարողութեան չափով դիմումներ կ'ընենք ու կը խնդրենք որ դուք ալ բարեհաճիք պէտք եղած դիմումները ընել: Խոստացուած նպաստները եթէ տրուին, ու տուներու շինութիւնը եթէ սկսի ժողովուրդը բաաական պիտի քաջալերուի ու գաղթականութեան հոսանքը, որ ծայր տալ սկսաւ, պիտի դադրի: Այս մասին Պատրիարքարան ալ գրեցինք հարկ եղածը:

Զինուորական ատեանը Անտիոքի մէջ գործը կը շարունակէ, բայց տակաւին որոշ քալ մը չէ առած, իսկ մեր գիտերուն գործը դեռ մէջտեղ չէ եկած: Ժխրի²⁹ մէջ բանտարկուածները կը մնան, միայն թէ Օրտուի աղաները վերադարձած են ու կը պտտին: Հէլալ աղա անուն գազանը անգամ մը Պէյրութի մէջ տեսնուելէն վերջը կրկին անհետացած է ու հիմա Աղեքսանդրիա կը գտնուի եղեր:

Ժխրի Շուղուրի մէջ մահքեմէի³⁰ անդամ Եունուս աղազատէ Սատըզ որ այժմ միաթաւթիգ³¹ ալ եղեր է մեծ բաժին ունեցած է ժողովուրդը գրգռելու մէջ: Սայիուն³² գաառակին մէջ գտնուող Մէհէմմէտ աղա Պէլիտօ անուն մարդուն նամակ գրած է որ կըրցածին չափ մարդ հանէ ու Քէսապի վրայ ինէ, եւ այս վերջինը դիմած է Սայիունի գաիմագամին անկէ 500 մարթին խնդրելով, բայց գայիմագամը ուզուած գէնքերը չէ տուած ու յորդորներ ալ գրած է որ այդպիսի սխալ քալ մը չառնեն: Այս մասին ալ կը խնդրենք որ պէտք եղած դիմումները ընել:

Ձեր մէկ այցելութիւնը վստահ ենք որ մեծ միջթարութիւն մը պիտի լլայ ժողովուրդին որ ամէն բանէ անելի բարոյական քաջալերութեան կը կարօտի: Երբոր լսեցինք թէ մտադիր էք մեզ այցելել խիստ ուրախացանք, եւ կը խնդրենք որ օր առաջ ձեր այդ մտադրութիւնը ի գործ դնելք: Այս շաբթուն վերջերը կամ գալ շաբթուն կը յուսան[ք] վայելել Վեհ. Կաթողիկոս իոր այցելութիւնը որուն համար ժողովուրդը խիստ ուրախ է: Ամենամեծ մտահոգութիւննիս է տուներուն շինութիւնը եւ ձմեռուն

համար ժողովուրդին վիճակին ապահովությունը, քանզի առանց ատոր դժուար եւ անկարելի պիտի ըլլայ ժողովուրդին յուսահատութեան առաջըն առնել:

Ներկակ կը գտնէք մէկ ցուցակը մեզ անհրաժեշտ եղող բաներուն, որմէ մէյ մէկ օրինակ դրկած ենք Ազգային Պատրիարքարանին եւ Միջազգային Յանձնաժողովին³³:

Մատչելով ի համբոյր Ս. Աջիդ, մնամք, Ձեր անգին կենաց աղօթարար

E. M. Chambers³⁴ Յ. Յ. Գունտագճեան³⁵ Պօղոս Քինյ. Աթիկեան³⁶

2.

Պօղոս Քինյ. Աթիկեանի նամակը Քեսապի հայութեան թշուառ վիճակին ու տրամադրութիւնք նպաստներուն մասին

Քէսապ, 13 Մարտ 1910

Գերապատիւ

Տ. Շահէ Ծ. Վ. Գասպարեան

Բարեջան առաջնորդական տեղապահ Բերիոյ եւ վիճակաց

Հայր Սուրբ,

Խորին շնորհակալութեամբ ստացայ Ձեր Մարտ 1 թուակիր նամակը, ինչպէս նաեւ տուի մը ծխախոտի հունտ, զորս բարեհաճած էիք մեզ ուղարկել: Յիշեալ հունտը ըստ Ձեր յանձնարարութեան անխտիր բաժնեցինք մեր մէջ:

Անհուն ուրախութեամբ կարդացի ձեր գրութիւնը, որ կը ծանուցանէիք թէ 3000 ոսկի նպաստ մը յատկացուած է ժողովրդեանս, որ ծմեռն ի բուն անօթութենէ կը տառապէր եւ կը տառապի այժմ:

Խեղճ ժողովուրդ, անգութ թշնամոյն սուրէն ու հուրէն մազապուր ազատած եւ ահա անօթութիւնը կ'սպառնայ իր կեանքին եւ իր գոյութեան: Հէ՛գ ժողովուրդ...

Այս ճգնաժամին մէջէն թշուառ ժողովրդեան բերկրախառն աղաչանաց մըմունջները Ձեզ կ'ուղղուին, Հայր Սուրբ, որ բարեհաճիք օր առաջ դրկել յիշեալ նպաստը, որ պիտի մեղմացնէ մի քիչ տառապեալ ժողովրդին ցանքը:

Գրաբեր ճրճոս Պասմաճեան եւ ուրիշ մէկը Ձեր կողմը կու գան վկայութեան համար: Հաճեցէք Ձեր օժանդակութիւնն անոնց նուիրել:

Մնամ Ձեր անգին կենաց աղօթակից

Պօղոս Քինյ. Աթիկեան

**Ռուբէն Էճգաճեանի եւ Յովհաննէս Ճիւրճեանի կազմած Քեսապի ու շրջակայքի զոհերու ընդհանուր ցուցակը՝ սպանութեան վայրի, սպանողի անունի եւ այլ տուեալներու յիշատակութեամբ:
Յուցակ Քեսապի դէպքին հետեւանօք տեղի ունեցած զոհերու: Ձոհերուն սպանեալ/վիրաւոր³⁷**

կարգին նամեր օ	անուն	Մականուն	թիւ	տարիք	ար ու	էգ	ար ու	էգ	ոճիրին վայրը	ոճրագործի ն անունը	դիտողութիւն
1	Արթին	Պասմաճեան	75	տարեկան	1				իրեն տան մէջ	անծանօթ	
2	Յակոբ	Գաֆեկեան	75	տարեկան	1				գիւղին մօտ	անծանօթ	
3	Վարդա	Աֆարեան	80	տարեկան		1			գիւղին մէջ	անծանօթ	
4	Սիմա	Այան [Այանեան] Գէորգին կինը	80	տարեկան		1			գիւղին մէջ	անծանօթ	
5	Վարդան	Գըլլճեան Կ. Յակոբի կին	35	տարեկան		1			Պետրոսիէ ³⁸	անծանօթ	Լաթաքիոյ Պասիթ ³⁹ գիւղախմբին ծովե- զերեայ մէկ գիւղը
6	Յովհան- նէս	անոր զաւակը	2	տարեկան	1				Պետրոսիէ	անծանօթ	Լաթաքիոյ Պասիթ գիւղախմբին ծովե- զերեայ մէկ գիւղը
7	Մարդա	անոր աղջիկը	6	տարեկան		1			Պետրոսիէ	անծանօթ	Լաթաքիոյ Պասիթ գիւղախմբին ծովե- զերեայ մէկ գիւղը
8	Պետրոս	Ղազարեան	55	տարեկան	1				Միւրսեիւ ⁴⁰	Գարաման օղլու Մուստաֆա [Գարամանի որդի՝ Մուստաֆա]	
9	Մարդա	Ջոպիկեան	65	տարեկան	1				տանը մէջ	անծանօթ	
10	Նշան	Գալայճեան	35	տարեկան	1				Գարատուրան ⁴¹	Ջապիթ Մուստաֆա ⁴² [Սպայ]	ըստ վկայութեան Համբարձում Աթիկեանի

										Մուստաֆա]	
11	Մարիամ	Պոլնոեումուշագեան	70	տարեկան		1			Գայաճրգ ⁴³	անծանօթ	
12	Ստեփան	Քէշիշ Օղլու [Քէշիշի որդի-Քէշիշեան]	55	տարեկան	1				Տէսթօրիէ ⁴⁴	անծանօթ	
13	Խըչեր	Քէշիշ Օղլու [Քէշիշի որդի-Քէշիշեան]	25	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	սպաննած եւ ապա վառած
14	Խըչեր	Կիրճի Օղլու [Կիրճի որդի-Կիրճիեան]	80	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	
15	Փանոս	Պասմաճը Եագուպ Օղլու [Պասմաճի- Պասմաճեան Եա-գուպի- Յակոբի որդի]	50	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	եկեղեցոյ ժամկոչը
16	Վահան	վերջնոյն որդին	20	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	
17	Ովսաննա	Նշան Գուլագ- սըգեան	25	տարեկան		1			գիտլին մէջ	անծանօթ	
18	Գրիգոր	Այան Օղլու [Այանի որդի- Այանեան]	90	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	
19	Փանոս	Քէշեան	80	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	
20	Մարիամ	անոր կինը	75	տարեկան		1			գիտլին մէջ	անծանօթ	
21	Կարա- պետ	Պետրոսեան	70	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	
22	Թիփուվէ- տէ ⁴⁵	Կիրակոս Ղազարեան	30	տարեկան		1			գիտլին մէջ	անծանօթ	
23	Ովսաննա	վերջնոյն աղջիկը	6	ամսուան		1			գիտլին մէջ	անծանօթ	
24	Սառա	Համմար Փանոսի կինը	60	տարեկան				1	գիտլին մէջ	անծանօթ	
25	Պետտուր	Պետրեան	70	տարեկան	1				գիտլին մէջ	անծանօթ	
26	Մարթա	վերջնոյն կինը	70	տարեկան		1			գիտլին մէջ	անծանօթ	

27	Ճրճի	Արապ Օղլու [Արապի որդի-Արապեան]	75	տարեկան		1		2ընարճըզ ⁴⁶	անծանօթ	
28	Մարթա	Յովսէփ Արապ Օղլու [Յովսէփ Արապի որդի-Արապեան]	35	տարեկան		1		Ֆաքը Հասան ⁴⁷	անծանօթ	Սերոբ անուն չորս տարեկան մանչ զաւակն ալ երկիւղէն կը մեռնի
29	Շահէն	Սողոմոն Փապուճեան	12	տարեկան			1	Եղը	անծանօթ	
30	Յովհաննէս	Այան Օղլու [Այանի որդի-Այանեան]	60	տարեկան	1			Եռները	անծանօթ	
31	Յովհաննէս	Քիթապսըզբեան	75	տարեկան	1			Եռները	անծանօթ	
32	Մաննուշ	Մելքոնեան	8	տարեկան		1		Պետրոսիէ	անծանօթ	հրեշային անգթութեամբ ծովը նետուած եւ խեղդուած
33	Նշան	Զափալը Օղլու [Զափալի որդի-Զափալեան]	36	տարեկան	1			Անտիօք	խանճը Քեազիմ [պանդոկապետ Քեազիմ]	Պանդոկ, Հաճի Րիֆաաթ աղայի ⁴⁸ կը պատկանի
34	Սիմոն	Խիթապ Օղլու [Խիթապի որդի-Խիթապեան]	35	տարեկան	1			2ընարճըզ	անծանօթ	
35	Վարդան	Պօյնուեռմուշագեան	2	տարեկան		1		Եռները	անծանօթ	խուժանին հետապնդումէն ահաբեկած մայրը կը լքէ զինքն ու կը փախչի
36	Յովհաննէս	Հայթի Օղլու [Հայթիի որդի-Հայթիեան]	7 5	տարեկան	1			Տէսթօրիէ	անծանօթ	
37	Յովհաննէս	Գարապէտիկ	40	տարեկան	1			Այաս ⁴⁹	անծանօթ	

	նէս							(Պուրնագ ⁵⁰)		
38	Յակոբ	Շէխօք Օղլու [Շէխօքեան]	55	տարեկան	1			Էսքուրան ⁵¹	Նդրենլի [նդրենցի] Հասան Մուրթ-ը եւ Սեքելի Մօհամմէտ եւ Խալիլ, ըստ վկայութեան որդւոյն Սողոմոնի	
39	Ովսան- նա	Պօյնուեռամշագեան	18	ամսուան		1		լեռները	անծանօթ	միեւնոյն եղանակաւ որպէս Նօ. 35
40	Եագուպ	Փաշա Փանոս Օղլու [Փաշա Փանոսի որդի- Փանոսեան]	40	տարեկան	1			լեռները	անծանօթ	
41	Ճրճը	Չանթալը	30	տարեկան	1			Անտիոք	Խանճը Քեագիմ	
42	Եղիսա- բէթ	Սերոր Ղազարեան	3	ամսուան		1		Պետրուսիէ	անծանօթ	տես ծանօթ. նօ. 35
43	Մաննուշ	Այան Օղլու [Այանի որդի- Այանեան] Սիմօնի կինը	70	տարեկան			1	լեռը	անծանօթ	
44	Յակոբ	Հէվաճ Օղլու [Հէվաճի որդի-Հէվաճեան]	20	տարեկան	1			Անտիոք	Խանճը Քեագիմ	
45	Կարա- պետ	Քիւրտ Օղլու [Քիւրտի որդի-Քիւրտեան]	25	տարեկան	1			Անտիոք	Խանճը Քեագիմ	
46	Նշան	Պալլը Օղլու [Պալլի որդի-Պալեան]	25	տարեկան	1			Այաս	անծանօթ	
47	Նշան	Կիրակոս Մարգարեան	18	տարեկան	1			Այաս	անծանօթ	
48	Պօղոս	Մարկոս Քէշիշեան	70	տարեկան	1			լեռը	անծանօթ	
49	Գէորգ	Մահտեսի Փանոսեան	70	տարեկան	1			լեռը	անծանօթ	
50	Յակոբ	Ինճէհիկեան	50	տարեկան	1			տանը մէջ	անծանօթ	մեռցնելէ վերջ տան մէջ կը վառեն
51	Սառա	վերջնոյն աղջիկը	5	տարեկան		1		տանը մէջ	անծանօթ	մեռցնելէ վերջ տան

											մէջ կը վառեն
52	Եագուպ	Բրդոտ Մարտիրոս Օղլու [Բրդոտ Մարտիրոսի որդի-Բրդոտ Մարտիրոսեան]	40	տարեկան	1				Այաս (Պոլսնագ)	անծանօթ	
53	Մարթա	Գաբրիէ Ինճէճիկեան	75	տարեկան		1			գիտին մէջ	անծանօթ	
54	Եղսա	Խըտըր գըզը [Խըտըրի ղուատըր]	50	տարեկան		1			գիտին մէջ	անծանօթ	
55	Միսաք (Քէլիճէ)	Հէվտալեան	30	տարեկան	1				Անտիոք	խանճը Քեազիմ	
56	Յովսէփ	Չելեպեան	40	տարեկան	1				Քէօքքէն ⁵²	անծանօթ	կը թողու չորս որբ, կինը դէպքէն առաջ մեռած
57	Գրիգոր	Գօճա Տէօյի	75	տարեկան	1				Քեսապ	անծանօթ	
58	Յակոբ	Կիրակոսեան	70	տարեկան	1				Քեսապ	անծանօթ	
59	Վարդան	անոր կինը	45	տարեկան				1	Քեսապ	անծանօթ	
120	Պօղոս	Աշըգ Օղլու [Աշըգի որդի- Աշըգեան]	25	տարեկան	1				Պեզկէ ⁵³	Մօլլա Օղ- լու Մօհամ- մէտ [Մու- լայի որդի՝ Մուհամմէտ]- քան- տարկուած Թրտու:	Կը թողու որբեայորին եւ մէկ որբ
121	Եղիսա- բէթ	Խաթապեան	60	տարեկան				1	Չընարճըզ	անծանօթ	
122	Գէորգ	Թօփալեան	75	տարեկան	1				Քեսապ	անծանօթ	

123	Սահակ	Պետտում Օղլու [Պետտումի որդի- Պետտումեան]	55	տարեկան	1			Էսքուրան	անծանօթ	
124	Մաննուշ	Չանթայի Գրգը	72	տարեկան		1		Էսքուրան	անծանօթ	
125	Հելլեն	Քիլտ Գրգի	30	տարեկան	1			Էսքուրան	անծանօթ	
126	Սառա	Քել Եագուպեան	3	տարեկան		1		Գարատուրան	անծանօթ	
127	Սարգիս	Աթիք Օղլու [Աթիքի որդի-Աթիքեան]	21	տարեկան	1			Անտիոք	խանճը Քեազիմ	
128	Սիմա	Թեմիրեան	80	տարեկան		1		Քեսապ	անծանօթ	
129	Եագուպ	Գարաեագուպեան	56	տարեկան	1			Գարատուրան	անծանօթ	
130	Խաչեր	Յակոբ Սողոմոնեան		տարեկան	1			Պետրոսիէ	անծանօթ	
131	Քենտիր- ճի	Յովհաննէս	70	տարեկան	1			Գարատուրան	անծանօթ	
132	Եղսա	Յովհաննէս Փապումեան	65	տարեկան		1		Քեսապ (տանը մէջ)	անծանօթ	
133	Մինաս	Գարաեագուպեան	22	տարեկան	1			Անտիոք	խանճը Քեազիմ	
134	Ճըրճի	Աշըգ Շամօ Օղլու [Աշըգ Շամոյի որդի-Շամոյեան]	1	տարեկան	1			Միլսուելք	անծանօթ	տես ծանօթ. N. 35, մօրը կողմէ ծովը նետուած
135	Սերոբ	Արապ Հերկելե Օղլու [Արապ Հերկելի որդի- Հերկելեան]	1	տարեկան	1			Չընարճըզ		տես ծանօթ N. 35
136	Ճըրիս	Պզտիկ Օղլու [Պզտիկի որդի-Պզտիկեան]	50	տարեկան	1			Քեսապ	անծանօթ	
137	Սերոբ	անոր որդին	8	տարեկան	1			Քեսապ	անծանօթ	
138	Խըչա	Կէօկճէ Փանոս Օղլու [Կէօկճէ Փանոսի որդի- Փանոսեան]	31	տարեկան	1			Այաս	անծանօթ	

139	Եա	Գալենտեր Պետրի կինը	55	տարեկան		1		Միլոսելեկ	անձանօթ	
140	Մուլա	Լենդ Իսէի կինը	70	տարեկան		1		Քեսապ	անձանօթ	
141	Սառա	Նիգօլա Փապունեան	60	տարեկան		1		Գարատուրան	անձանօթ	
142	Մաննուշ	Սարգիս Փապունեան	65	տարեկան		1		Գարատուրան	անձանօթ	
143	Եա	Աբրահամ Եարայեան	55	տարեկան		1		Գարատուրան	անձանօթ	
144	Ծաղիր	Զաթիկ հաճիի կինը	30	տարեկան		1		անյայտ	անձանօթ	
145	Եղիա	Պընտըզ Պօղոս Օղլու [Պընտըզ Պօղոսի որդի- Պօղոսեան]	20	տարեկան	1			Այաս	անձանօթ	
146	Մուսա	Պըզտիգ Ճրճիս Օղլու [Պըզտիգ Ճրճիսի որդի- Պզտիկեան]	18	տարեկան	1			Այաս	անձանօթ	
147	Մինաս	Զափալլի Օղլու [Զա- փալլիի որդի- Զափալեան]	55	տարեկան	1			Քեսապ	անձանօթ	
148	Յովհան- նէս	Պօզուզլը Բենիամին	2	տարեկան	1			Քեսապ	անձանօթ	
149	Ովսաննա	Նշան Գուլագսեան	25	տարեկան		1		Պետրոսիէ	անձանօթ	
150	Ճէօհէր	Մինաս Սողոմոնեան	60	տարեկան	1 ⁵⁴			Քեսապ	անձանօթ	
151	Ովսաննա	Շահպազ	65	տարեկան	1			Էքքիճէ ⁵⁵	անձանօթ	
152	Խաթուն	Փօլատ Սարգիս Օղլու [Փօլատ Սարգիսի որդի- Փոլատեան]	75	տարեկան		1		Քեսապ	անձանօթ	
153	Պետրոս	Ղազար Եագուպ Օղլու [Ղազար Եագուպի-Յա- կոբի որդի-Եագուպեան]	53	տարեկան	1			Քեսապ	անձանօթ	
154	Միսաք	Աթիքեան	42	տարեկան	1			անյայտ	անձանօթ	
155	Սերոբ	անոր որդին	14	տարեկան	1			անյայտ	անձանօթ	

156	Սառա	Պոլտոնումշազ [Պոլտոնումշազեան] Յովսէփ	3	տարեկան		1			Գայաճըզ	անծանօթ	
157	Եաղուպ	Ճուրղամ Կրպօ Օղլու	20	տարեկան	1				անյայտ	անծանօթ	
158	Եագուպ	Լինդ Կիրակոս Օղլու [Լինդ Կիրակոսի որդի-Լինդեան]	42	տարեկան	1				Այաս	անծանօթ	
159	Վարդա	Նիկ. Պասմաճեան	1	տարեկան		1			Պետրուաիէ		տես ծանօթ. Ն. 35
160	Մաննուշ	Եղիա Մելքոնեան	8	տարեկան		1			Պետրուաիէ		տես ծանօթ. Ն. 35, խումանի կողմէ
161	Խըչա	Պօսթանճի	55	տարեկան	1				Քեսապ	անծանօթ	
162	Մաննուշ	Աթիքեան	70	տարեկան		1			Քեսապ	անծանօթ	
163	Խըչա	Աւետիքեան	25	տարեկան	1				Այաս	անծանօթ	
164	Ճեպպուր	Սելլում	70	տարեկան	1				Գայաճըզ	անծանօթ	
165	Յակոբ	Շէխօ Քէօֆլեզ	50	տարեկան	1				Էսքուրան	անծանօթ	
166	Մուսա	Գարա Քէօտ Օղլու [Գարա Քէօտի որդի-Քէօտեան]	70	տարեկան	1				լեռները	անծանօթ	
167	Եագուպ	Պէօճիկ Օղլու [Պէօճիկի որդի-Պէօճիկեան]	38	տարեկան	1				Տէթուրիէ	անծանօթ	
168	Եագուպ	Թեմիր Օղլու [Թեմիրի որդի-Թեմիրեան]	51	տարեկան	1				Քեսապ	անծանօթ	
169	Սերոբ	Թեմիր Օղլու [Թեմիրի որդի-Թեմիրեան]	1	տարեկան	1				Քեսապ	անծանօթ	տես ծանօթ. Ն. 35
170	Վարդա	Հավկատի կինը	70	տարեկան		1			Միրսեյեկ	անծանօթ	
171	Քրիսթին	Սարգիս Գարա Քէօտ	2	տարեկան		1			Քեսապ	անծանօթ	
172	Վարդա	Խերկեյի Եուուֆի կինը	40	տարեկան		1			Պետրուաիէ	անծանօթ	
173 ⁵⁶	Ովսաննա	Նշան Գուլագորզեան	25	տարեկան		1			Պետրուաիէ	անծանօթ	
[Ընդհանուր]					103	56	5	8			

Համեմատական վիճակացույց Քէսապի եւ շրջակայ գիւղերուն						
Գիւղերու անուններ	տուներ	այրուածներ	մեռածներ 153 անձ թէ գիւղերուն մէջ եւ թէ ուրիշ քաղաքներու ն մէջ	վառած եկեղեցի եւ դպրոցներ	կանգուն եկեղեցի եւ դպրոցներ	իւրաքանչիւր ժողովրդեան ընտանիքներու թիւը Հ. հայ առաքելական Բ. Բողոքական Բ. Քաթօլիկ-հայ Լ. Լատին
Քէսապ	800	515		1 եկեղեցի բողոքականաց	հայոց 1 լատինաց 1	520 Հ. 250 Բ. 30 Բ.
Գարատուրան	212	65		1 հայ- քաթօլիկաց	եկեղեցի եւ դպրոցներ հայոց եւ բողոքականաց	23 Բ. 11 Բ. մնացեալը Հ.
Էքիզ օլլիս	70	39		2 դպրոց բողոքականաց	բողոքական եկեղեցի	70 տուն կամ ընտանիք բողոքական
Քէօրկիւնէ	66	34		1 դպրոց լատինաց	բողոքական եկեղեցի	15 Հ. 50 Բղք.
Չագըլընզ	30	3		1 դպրոց հայ քաթօլիկաց	բողոքական դպրոց	5 Հ. 25 Բ.
Չինարընզ	44	15		1 հայ առաքելական աղջկանց	լատին դպրոց	18 Հ. 26 Բ.
Տիւզաղաճ	24	23				
Պաղճաղազ ⁵⁷	40	—		5 օտար հաստատութիւններու	բողոքական դպրոց	4 Հ. 15 Բ. 20 Լ. ⁵⁸
Գայաճըզ	76	17		բողոքականաց դպրոցին 1/2ը		12 Բ. մնացեալը հայ
Էսքի Էօրէն	30	13				19 Հ. 2 Բղ. 4 Բ.
Խայրթ	15	6				7 Հ. 4 Բ. 4 Բ.

- ¹ Ռուբեն Էճզաճեան՝ հայկապահայ հին գաղութի ծանօթ դեմքերէն (Նիկոլէ 1878-Պէյրուֆ 1930): 1901ին շրջանաւարտ եղած է Պէյրուֆի Ամերիկեան Համալսարանի դեղագործութեան ճիւղէն: Հաստատուելով Հալէպ հիմնած է իր սեփական դեղարանը, միաժամանակ զբաղած է ազգային գործերով ու վարած է զանազան պաշտօններ: Անիի ետք անցած է Պէյրուֆ: Անդամակցած է ՀՐԸՄԻն եւ ՌԱԿին: Համաշխարհային առաջին պատերազմին, դեղագործ-սպայի աստիճանով զինուորագրուած է թրքական բանակին ու մեծ ծառայութիւններ մատուցած է Հալէպ հասնող աքսորական հայերուն (Ալպոմ Յուշամապեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Պէյրուֆ, Տպ. Ատլաս, 1969, էջ 128-9):
- ² Յովհաննէս Ճիւրճեան՝ հայկապահայ ծանօթ ազգային: 13 Փետրուար 1911ին անդամ ընտրուած է Կիլիկիոյ աղետեալներուն օժանդակելու համար Հալէպի մէջ կազմուած Նպաստից Յանձնաժողովին: Անդամ էր ՀՐԸՄԻն: Գրած է նաեւ բանաստեղծութիւններ:
- ³ Ալպէո Ս. Թէմիրեան, *Քէսապ (1909-1946)*, Պէյրուֆ, Տպ. Կ. Տօնիկեան, 1956, էջ 53:
- ⁴ Յակոբ Չոլաքեան, *Քեսապ*, Անթիլիաս, ՏԿՀՄՏԿ, 2015
- ⁵ Թէմիրեան, 276 էջ:
- ⁶ Տօքթ. Ալպէրթ Ս. Աբէլեան (Էքիլենց), *Քեսապ եւ Իր Գիւղերը*, հրատարակութեան արտուստեց եւ ծանօթագրեց՝ Երուանդ Հ. Քասունի, Պէյրուֆ, 2002:
- ⁷ Նկատի ունի Բերիոյ (Հալէպի) թեմի առաջնորդական տեղապահ Շահէ Վրդ. Գասպարեանը (ապա՝ Եպս., Այնթապ 1882-իս. Հայաստան 1935): Վարած է թեմական զանազան պաշտօններ ու եղած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորաբաց Դպրեվանքի առաջին տեսուչը:
- ⁸ Արաբերէն՝ գաառապետ:
- ⁹ Արաբերէն՝ գաառակապետութիւն:
- ¹⁰ Ճիսիւրի գաառակապետը որ մասնակցած է Քեսապի շրջակայ գիւղերու աներումին եւ տեղոյն հայութեան կոտորածին (Հրաչիկ Սիմոնեան, *Հայերի Զանգուածային Կոտորածները Կիլիկիայում (1909 Թ. Ապրիլ)*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 2009):
- ¹¹ Էքիզ Օլուզ - Տեղական անուանումով՝ Քուզուլօզ: Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապի հարաւ-արեւմուտքը, Քեսապէն մօտ 3 քմ. հեռաւորութեան վրայ:
- ¹² Զագալճըզ կամ՝ Զագալճըզ - Տեղական անուանումով՝ Զագալճօզ: Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապի հարաւ-արեւմուտքը, Քեսապէն մօտ 2 քմ. հեռաւորութեան վրայ:
- ¹³ Խալիթ - Քեսապի գիւղերէն: Կը գտնուի անոր հարաւ-արեւմուտքը, անկէ մօտ 1.5 քմ. հեռաւորութեան վրայ:
- ¹⁴ Տիւզ Աղաճ կամ Տուզաղաճ - Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապէն հարաւ-արեւմուտք, անկէ մօտ 5 քմ. հեռաւորութեան վրայ, թրքական սահմանին մօտակայքը:
- ¹⁵ Պաշուրթ կամ Պաշուրտ - Գիւղակ Քեսապէն արեւմուտք, անկէ 5-6 քմ. հեռաւորութեան վրայ:

- ¹⁶ Փաստաթուղթը անթուակիր է, բայց յայտնապես կազմում է նախորդ մեռելացանկի մօտ թուականի մը եւ նոյնին հետ միասնաբար ներկայացուած է Հալէպի Ազգ. Առաջնորդարան:
- ¹⁷ Քննապցիք կոտորածներէն խոյս տալով, նախ ապաստանած են մօտակայ լեռները, ապա անցած են Պասիթի ծովեզերք, ուրկէ ֆրանսական նաւերով տեղափոխուած են Լաթաքիա, ուր շրջան մը մնալէ ետք, մաս առ մաս վերադարձած են նախ՝ Պասիթի, ապա՝ Քեսապ:
- ¹⁸ Փաստաթուղթը անթուակիր է, բայց յայտնապես կազմում է նախորդ զոյգ փաստաթուղթերու մօտ թուականի մը ու անոնց հետ ներկայացուած է Հալէպի Ազգ. Առաջնորդարան:
- ¹⁹ Նկատի ունի այնքապցի Գէորգ Ճէպէճեանը, որուն հետ նամակագիրն ու Ներսէս Քհնյ. Թաւօզճեանը, Սահակ Բ. Կաթողիկոսի կարգադրութեամբ, 12 Մայիս 1909ին Այնթապէն ճամփայ ելած են դէպի Հալէպ՝ «Անտիօքի, Քեսապ եւ շրջակայից համար նիւթական նպաստ քաշխելու եւ արկածեալ ժողովուրդը միխթարելու պաշտօնով», եւ քաական երկար ժամանակ մնացած են աղէտեալ վայրերուն մէջ (Ներսէս Ազգ. Քհնյ. Թաւօզճեան, *Տառապանքի Օրագիր*, խմբ. Թորոս Թորանեան, Պէյրութ, Տպ. Հայ Տիպ Քոմիիկրաֆ-Թեքնոփրես, 1991, էջ 13):
- ²⁰ Պատերազմական ատեանի վճիռ, որոշում:
- ²¹ Նոյն թուականին Հալէպի նահանգապետն էր Ռաշիտ Պէշ, որ պաշտօնը ստանձնած է 5 Հոկտեմբեր 1908ին ու շարունակած՝ մինչեւ 1909ի Սեպտեմբերի վերջերը, երբ հալէպցիներու բողոքներուն վրայ պաշտօնանկ եղած է (محمد فواد عتايى ونجوى عثمان, *حلب في مئة عام 1950-1850*, Բ., Հալէպ, 1993, էջ 71, 79):
- ²² Արաբերէնէ առնուած թրքերէն՝ թելադրանք, յանձնարարութիւն:
- ²³ Սուետիա: Ծանօթ է նաեւ Մուսա Լեռ անունով: Գիւղախումբ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Անտիօք Գաւառակին մէջ, Միջերկրական Ծովու արեւելեան ափերուն, Քեսապէն հիախս-արեւմուտք: Ունեցած է հայաբնակ վեց գիւղ, որոնք 1911ին միասնաբար ունեցած են 1338 հայ տուն՝ 6283 բնակիչ (Գրիգոր Տունկեան, *Նիւթեր Լաթաքիոյ եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պատմութեան*, Հալէպ, Տպ. Զարք, 1983, էջ 35):
- Սուետիոյ շրջակայ հայաբնակ գիւղերը մարդկային եւ նիւթական մեծ կորուստներ ունեցած են 1909ին, բայց 1915ին, անտեսելով իրենց բնակավայրերէն հեռանալու կառավարական հրահանգը, բարձրացած են լեռ եւ ամրոցջ 53 օր հերոսաբար դիմադրելով եւ մարդկային նուազագոյն զոհեր տալով՝ ֆրանսական ռազմանաւերով տեղափոխուած են Փոր Սայիտ, Եգիպտոս ու փրկուած՝ համընդհանուր կոտորածէն:
- Հինադադարին, անոնք վերադարձած են հայրենի տուն ու կրկին շէնցուցած զայն, բայց 1939ին, շրջանի Թուրքիոյ բռնակցումով, տեղւոյն հայերը մեծամասնութեամբ հեռացած են անկէ եւ ապաստանած Լիբանան, ուր հիմնած են Այնճար հայաւանը:
- ²⁴ Նկատի ունի Լաթաքիոյ առաջնորդ Մովսէս Վրդ. Ոսկերիչեանը: Ծնած է Խարբերդ 1866ին (ըստ Աղամունիի՝ 1860ին): Երուսաղէմի մէջ կուսակոն քահանայ ձեռնադրուած է 1892ին եւ 1896-1901՝ եղած է տեսուչ Պաղեստինի Ս. Փրկիչ Վանքի, իսկ 1901-5՝ Բեթղեհէմի եկեղեցիին: 1909-15 վարած է Անտիօքի,

Լաթաքիոյ եւ Ճըսըրի առաջնորդութիւնը: 1915ին արքարոճած է ու վերադարձած 1919ին: Վախճանած է 8 Մայիս 1921ին (Մկրտիչ Եպսկ. Աղանունի, *Միաբանք եւ Այցելութք Հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, Տպ. Արքոք Յակոբեանց, 1929, էջ 309-10. նաեւ՝ *Հայաստանի Կոչնակ*, Նիւ Եորք, ԻԱ. տարի, թիւ 27, 2 Յուլիս 1921, էջ 898):

²⁵ Նկատի ունի Քեսապի Տէր Պօղոս Քիւյ. Աթիկեանը: Ծնած է 1860ին: Քահանայ ձեռնադրուած է 1890ին Սոյո մայրավանքին մէջ: Անդամակցած է Հնչակեան Կուսկցութեան: Իր նուիրած հողաշէտրտին վրայ կառուցուած է Քեսապի աղջկանց վարժարանը, որ ի պատիւ իրեն կոչուած է Ազգային Պօղոսեան Աղջկանց Վարժարան: Վախճանած է Հայոց Յեղասպանութեան տարիներուն, Սուրիոյ Համա քաղաքի իր արքարավայրին մէջ:

²⁶ Նամակը թերի է վերջէն, բայց գիրն ու այլ տուեալներ կը յուշեն որ նամակագիրը Վահան Քիւյ. Կիւտայեանն է:

²⁷ Փարա - Օսմանեան դրամական միատր, որ շրջանառութեան դրուած է 1520ին: Կը պատրաստուէր արծաթէ կամ պղինձէ: Իւրաքանչիւր 40 փարան կ'արժէր 1 դրուշ:

²⁸ Օգգա - Կշիռքի միատր, որ համապատասխանած է հալէպեան րաթըլի 1/12ին, այսինքն մէկ օգգան կը կշռէր 213,6 կրամ:

²⁹ Ժիսր Շուղուր կամ Ճըսըր Շուղուր - Քաղաք օսմանեան Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ճըսըր Շուղուր Գաւառակին կեդրոնը, Որոնդէսի հովիտին մէջ, Հալէպէն հարաւ-արեւմուտք 105 քմ. հեռաւորութեան վրայ: Ծանօթ է Որոնդէսի վրայ կառուցուած եւ 14 կամարներ եւ 400 մեթր երկարութիւն ունեցող իր հնամեայ կամուրջով:

Տեղւոյն փոքրաթիւ հայ գաղթօճախը 1902ին կը բաղկանար 7 տունէ (Միհրան Մինասեան, «Պատմական Անտիպ Տեղեկագիր Մը Բերիոյ (Հալէպի) Թեմի Հայութեան Մասին»՝ *Բանբեր Հայաստանի Արխիւների*, Երեւան, 2007, թիւ 1-2 (109-110), էջ 24, 29):

³⁰ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ դատարան:

³¹ Արաբերէնէ փոխառեալ թրքերէն՝ հարցաքննիչ դատարար:

³² Կամ Սահիօն: Գաւառակ՝ Սուրիոյ Լաթաքիա Նահանգին մէջ, համանուն քաղաքէն դէպի արեւելք: Գաւառի կեդրոն Սահիօն ասանը կը գտնուի Լաթաքիայէն 30 քմ. հեռաւորութեան վրայ: Շրջանը անիւ ետք վերանորոգուած է Ալ Հըֆֆէ: Ալ Հըֆֆէ ասանէն 2 քմ. հարաւ-արեւելք կը գտնուի պատմական Սահիօնի բերդը, իսկ անկէ հիսիւս-արեւելք՝ հայկական Արամօ եւ Ղենմիէ գիւղերը:

³³ Կազմուած է Կ. Պոլսոյ մէջ, Կիլիկեան Կոտորածներէն անմիջապէս ետք, Սուլթան Մուհամմէտ Խան Ե. Ռեշատի հովանաւորութեամբ, աղէտեալներուն նպաստ հասցնելու նպատակով: Յանձնաժողովը արկածեալ գլխաւոր քաղաքներուն մէջ ունեցած է իր ներկայացուցիչները, որոնք միշտ եղած են օտարահապաւնութիւն, ինչպէս որ էր Կ. Պոլսոյ կեդրոնական մարմնի անդամներու մեծամասնութիւնը: Յանձնաժողովը ունէր երկու մասնախումբեր, որոնցմէ առաջինին պարտականութիւնն էր արտասահմանէն նպաստներ հաւաքել, եւ զոր կը նախագահէր Մ. Հիւկէն, իսկ երկրորդին պարտականութիւնն էր հաւաքուած գումարները հասցնել արկածեալներուն, եւ զոր կը նախագահէր Մր. Փիթ:

- ³⁴ Ամերիկացի միսիոնարուհի Միս Էֆֆի Չեյմպլըս, որ Ամերիկեան Պորտին կողմէ ղրկուած էր հայկական շրջաններ: Ան ծառայած է Կարին, Ուրֆա, Այնթապ եւ Քեսապ, ուր ստանձնած է տնօրէնութիւնը Անտարանական Աղջկանց Բարձրագոյն Վարժարանին, որուն կից, անիւ ետը, հիմնած է գիշերօթիկ բաժին մը: Ինք է նաեւ հիմնադիրը Քեսապի Չագալճըզ գիտի Անտարանական Վարժարանին: Եղած է անձնագրի հայասէր մը, որ սորված է նաեւ հայերէն (Արէլեան, էջ 181):
- ³⁵ Վեր. Տիգրան Յ. Գունտազեան ծնած է Հասան Պէլի, ուր ստացած է նախակրթութիւնը: Ուսումնառութիւնը շարունակած է Այնթապ, զայն կիսաարտ ծգելով դասաւանդած է Պէլեանի ու Քեսապի դպրոցներուն մէջ: 1902ին աւարտած է Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Գոլէճը իսկ 1905ին՝ Մարաշի Աստուածաբանական Ճեմարանը, ապա՝ հովուական պաշտօնով անցած է Քեսապ եւ պատուելի ծնունդորոճ 1908ին: 1915ին Քեսապէն արքայորոճ է Համա, ուր թիֆուէ վարակուելով վախճանած է 27 Նոյեմբեր 1915ին (Արէլեան, էջ 219-221. նաեւ՝ Վեր. Տիգրան Ճ. Խրլոբեան, *Ոսկեմարտեան, Հոր. Ա., Պէլլուք, Տպ. Շնորհոքեան եւ Ա. Տէր Սահակեան, 1950, էջ 357-8*):
- ³⁶ Նամակը ստորագրողները տեղոյն Օգնութեան Յանձնախումբի դիւանի անդամներն են:
- ³⁷ Յուցակը կը կրէ «Հալէպ 20 Մայիսի 1909» եւ վերոյիշեալ երկու անձերուն ստորագրութիւնը:
- ³⁸ Պետրուսիէ՝ ծովեզերեայ թըքաբնակ գիւղ Միջերկրականի ափին գտնուող Պասիթի հրօանդանէն հիւսիս-արեւմուտը եւ Քեսապէն հարաւ-արեւմուտը: 1909ին քեսապցիք դէպի Պասիթ իրենց փախուստի ճանապարհին, ամբողջութեամբ կողոպտուած են Պետրուսիէի գիւղապետ Ռիֆաթ արալի կողմէ, բայց 1919ին քեսապցի կամաւորներ լուծած են իրենց վրէժը՝ այրելով գիւղը:
- ³⁹ Պասիթ՝ երկու քլմ. երկարութեամբ հրօանդան Միջերկրականի ափին, Քեսապի մօտակայքը, անկէ հարաւ-արեւմուտը, ուր 1909ին հաւաքուած են կոտորածներէն փախած քեսապցիք ու անկէ է որ անցած են Լաթաքիա: 1939ին, Ալեքսանտրէթի պարպումի օրերուն, Մուսա Լեռան հայկական գիւղերէն հեռացող հայերը եւս նախ 40 օր կանգ առած են Պասիթի ծովեզերքը, ապա տեղափոխուած են Լիբանան: Ան այժմ Սուրիոյ ծովեզերեայ լաւագոյն ամառանոցներէն մէկն է:
- ⁴⁰ Միւսեւէկ կամ Մուղուլուկ - Թըքաբնակ լեռնային փոքրիկ գիւղ Քեսապէն մօտ 5 քլմ. արեւմուտը, Պեզկէ գիւղախումբին մէջ, հայաբնակ Պաշրտ գիւղին մօտակայքը, Կասիոս Լ. հարաւային լանջերուն: Գիւղը եզերող բոլոր կալուածները նախապէս պատկանած են քեսապցիներուն: Միւսեւէկը եւս, 1939ին Ալեքսանտրէթի շրջանին Թուրքիոյ բռնակցումով, Սուրիայէն խլուելով՝ կցուած է Թուրքիոյ:
- ⁴¹ Գարատուրան կամ՝ Գալատուրան - Քեսապի գիւղերէն մեծագոյնը, որ կը գտնուի անոր արեւմուտը ու կը տարածուի մինչեւ Միջերկրական Ծով: Ունեցած է եկեղեցիներ, ուխտատեղիներ ու դպրոցներ:
- ⁴² Յակոբ Թերզեան եւս Քեսապի ու Անտիոքի ջարդարարներու շարքին յիշած է հեծեալ *ժանկարմա* Մուրաթալի մը անունը, որ կոտորածներէն ետը «արծակ

համարձակ» վիճակի մէջ էր (Յակոբ Յ. Թերզեան, *Կրիկիոյ Աղէտը*, տպագրութիւն Յ. Ասատուրեան եւ Ռորիք, Կ. Պոլիս, 1912, էջ 795):

⁴³ Գայաճըզ կամ Սեւ Աղբիւր, տեղական անուանումով՝ Սիվ Արքայր - Քեսապի գիւղերէն, կը գտնուի Քեսապէն հիսիս-արեւելք, անկէ մօտ 2 քմ. հեռաւորութեան վրայ, թրքական սահմանի հարեանութեամբ: Կրիկեան կոտորածներուն եղած է յարձակման ենթարկուած ու իրոգեհի տրուած Քեսապի առաջին գիւղերէն մէկը:

⁴⁴ Տեսթուրիէ կամ Տեսթուր, տեղական անուանումով՝ Տըսթօր - Թրքաքնակ գիւղ Քեսապէն արեւելք, Սեւ Աղբիւր հայկական գիւղէն ոչ շատ հեռու: Ան եա, 1939ին, Ալեքսանտրէի շրջանին Թուրքիոյ բռնակցումով, Սուրիայէն խլուելով՝ կցուած է Թուրքիոյ:

⁴⁵ Թերզեան, «Քեսապի Զարդին Միջոցին Տեղի Ունեցած Սրտաճմլիկ Պարագանքեր» ենթավերնագրով տուած է Թուրքանտայի եւ յաջորդ սիմակով տրուած անոր վեցամսեայ դատեր՝ Ովսաննայի նահատակութեան մանրամասնութիւնները: Կ'արտագրենք իր խօսքերը նշյնութեամբ. «Թուրքանտայ Ղազարեան.- Քէսապ փանը մէջ խուժանի կողմէ կ'սպաննուի, Պէզկիցի թուրք մը երբ գէնքերը կ'առնէ որ ինք ալ ջարդի երթայ, կինը կ'աղաչէ ու կը պաղադի որ այս չար նպատակէն հրաժարի, բայց անօգուտ, անիկա որոշած է եւ պիտի երթայ, ճամբան առաջին հանդիպած փունը Թուրքանտայինը կ'ըլլայ. չի մտածելով արդէն թէ պիտի ձեռքեր այդ յարկին մէջ իրենց անըն գործած էին, շառաչմամբ կը բանայ դուռը եւ քարացած կը մնայ ահուելի փեսարանին հանդէպ, որ կը պարզուի իր աչքին առջեւ, վեց ամսուան մանկիկ մը՝ սպաննուած մօրը սփինգներուն կառչած կայքի փոխարէն արին կը ձօժէր:- Պէզկէցի թուրքը խելացնոր այս քսութեցուցիչ պատկերին ի փես, անիծելով կը նեպէ հոգի իր գէնքերը, եւ մինչ սարսափահար խոյս կու փոր նա արկէ հրոգեհը կը ծաւայի ու մոխրակոյրին փակ կ'անյայտանայ մօրն ու մանկան սրբազնագոյն աճիւնները» (Թերզեան, էջ 685-688):

⁴⁶ Չընարճըզ կամ Չինարճըզ-Չինար, տեղական անուանումով՝ Չընուօր - Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապի հարաւ-արեւմուտքը, անկէ մօտ 2 քմ. հեռաւորութեան վրայ:

⁴⁷ Ֆազը Հասան - Թրքաքնակ ծովամերձ գիւղ, Քեսապի Պաղճաղազ գիւղին հարեանութեամբ, Քեսապէն մօտ 3 ժամ հեռաւորութեան վրայ: 1909ին գիւղի բնակիչները կողոպտուած են Քեսապէն՝ Պասիթի ծովեզերք ու անկէ՝ Լաթաքիա ուղղուող վիսխատականներու խումբը եւ վար դրած անոնց կենդանիները: Չինարդարէն տեք, 1919ին քեսապցի կամաւորներ պատժած են զիրենք՝ այրելով Ֆազը Հասանը:

⁴⁸ Հաճի Մուհամմէտ Րիֆաաթ Աղա Պարաքաթ Ալ Խալիտի - Անտիոքի ամենաազդեցիկ աղան, որուն նախահայրերը Անտիոք գաղթած են Սուրիոյ Հոմս քաղաքէն: Իր գրգռութեան հետեանքով է որ Անտիոքի թուրք խուժանը յարձակած է տեղւոյն հայերուն վրայ ու կոտորած գանոնք: 1908ին Անտիոքի կողմէ ընտրուած է անդամ օսմանեան երեսփոխանական ժողովին եւ այդ հանգամանքով վայելած է պետական անձեռնմխելիութիւն: Մահացած է 23 փետրուար 1910ին:

իր մասին հանդիպած ենք այսպիսի վկայության. «Անփոքի թուրք էշրէֆին ամենահզօր դէմքն էր Րըֆաթ աղան: Երեսուն երկու աստիճանով ֆրանք մասսե: Տէրն ու փրիականը փաստեակ գիտէրու, Որոնդէսի հովրին ամենաարգաւանդ հողերուն վրայ եւ բազաթի կալուածներու քաղքին մէջ: Իննամիական կապերով սերտորէն միացած Հալէպի մեծագոյն միալիմ գերդաստաններուն ու զինուորական ասպանիին: Ոչ մէկ կուսակալ կրնար ապահով կենալ իր այծողին վրայ՝ առանց ենթարկուելու Րըֆաթ աղայի նահանգային դիւանագիտութեան» (Ն. Մ. Պաղտոյեան, «Ճէպէլ Մուսա եւ Հայ Լեռնականները», Հայրենիք ամսագիր, Պոսթոն, ԺԳ. տարի, Փետրուար 1935, թիւ 4 (148), էջ 72):

⁴⁹ Այս - Պատմական կարետր նաահանգիստ Միջերկրականի ափին, Հայոց Օոցի հիախ-արեանուորը: Ի. դարասկիզբին ունեցած է 5000 բնակիչ, որուն 2000ը հայեր, որոնք ունեցած են Ս. Սարգիս եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներն ու ազգային վարժարան մը (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան, Ա. հարոր, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1986, էջ 224):

⁵⁰ Պուրնազ - Գիւղ՝ Ատանա Նահանգի Ճապալ Պարաքաթ Գաւառին մէջ, համանուն գետի ափին, Այասէն ոչ շատ հեռու:

⁵¹ Էսքըրան կամ Էսկիւրէն, տեղական անուանումով՝ Էսկիւրէն - Ծանօթ է նաեւ Ներքի Գիւղ (տեղական անուանումով՝ Նըրքը Գիւղ) անունով: Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապի հարաւ-արեանուորը, Քեսապէն մօտ 2 քմ. հեռաւորութեան վրայ, թրքական սահմանին հարեանութեամբ:

⁵² Քէօնքէնէ կամ Քէօրքիսէ, տեղական անուանումով՝ Քիւրքիսու - Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապէն հարաւ-արեանուոր, անկէ մօտ 3 քմ. հեռաւորութեան վրայ:

⁵³ Պեզկէ - Թրքաքնակ գիւղ Քեսապի արեւելքը, Օրտուէն 12 քմ. հիախ-արեանուոր, համանուն գիւղախումբի կեդրոնը: Կառուցուած է հովիտի մը մէջ: Պեզկէն եւ, 1939ին, Ալքսանտրէթի շրջանի Թուրքիոյ բռնակցումով, Սուրիայէն խլուելով՝ կցուած է Թուրքիոյ:

⁵⁴ Այս ու յաջորդը սխալմամբ արձանագրուած են արունքնու սինակին մէջ:

⁵⁵ Էսքիճէ կամ Էսքիճա - Գարատուրանի ծովածոցին մօտ, դէպի հիախ տարածուող ծովափնայ տարածութիւն, որուն կէտը պատկանած է գարատուրանցիներուն եւ ուր գտնուած է անոնց արտերուն մեծ մասը: Էսքիճան եւ, 1939ին, Ալքսանտրէթի շրջանի Թուրքիոյ բռնակցումով, Սուրիայէն խլուելով՝ կցուած է Թուրքիոյ:

⁵⁶ Նկատելի է մէկ թիւի սխալ հաշուարկ՝ 172-173: Թերզեան, Քեսապի զոհերու թիւը նշած է իբր 173, որ հոս տրուած զոհերու (103+56=159) եւ վիրատուներու (5+8=13) ընդհանուր թիւն է մէկ թիւի սխալ հաշուարկով եւ՝ ոչ թէ միայն զոհերու: Ան իր տեղեկութիւնները քաղած է Հալէպի առաջնորդական փոխանորդ Շահէ Ծ. Վրդ. Գասալարեանէն (Թերզեան, էջ 267):

⁵⁷ Պաղճաղազ - Քեսապի գիւղերէն: Կը գտնուի Քեսապի հարաւ-արեանուորը: Կը բաղկանայ իրարու մօտակայ երկու գիւղերէ՝ Վարի Պաղճաղազ եւ Վերի Պաղճաղազ: Տեղական անուանումներով՝ Վըրը Պաղ եւ Նըրըր Պաղ: Քեսապէն հեռաւորութիւնը՝ մօտաւորապէս 7-10 քմ.:

⁵⁸ Հոս երկու՝ Վերի եւ Վարի Պաղճաղազները նկատի առնուած են որպէս մէկ գիտլ:

UNPUBLISHED DOCUMENTS ON THE 1909 MASSACRES OF KESAB
(Summary)

MIHRAN MINASSIAN
mihran.min@gmail.com

The author introduces seven unpublished documents related to the massacres of Kesab in 1909.

Four of these documents are reports written by Roupen Edjzadjian and Hovhannes Djeiardian, who were sent to the region by the Aleppo prelacy to examine and provide first hand information and data on the living conditions of the local population. One of the documents is a partial list of the names of Kesab Armenians who were killed during the massacres and is enriched with further details. Three of the documents were written by the local clerics.

The documents shed light on the population during the post-massacres period, their dire living conditions, the extreme poverty, the danger of famine, the halting of state relief, the freeing of a number of the criminals from jails and their uncontrolled circulation on the streets, the desperation prevailing among the population, and similar issues. One of the documents provides very important statistics on the local population and the material losses it sustained including the destruction of personal and public properties, like houses and churches.

These documents shed new light on the 1909 massacres in Kesab and extend academic knowledge on the Cilician Massacres to include the episodic information known about their extension to the Kesab region.

